Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայրում հանրային բաց լսումների

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

17 փետրվարի 2023 թվական

2023 թվականի փետրվարի 17-ին Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայրում կայացավ հանրային լսումներ՝ մասնակցությամբ Ախուրյան խոշորացված համայնքի, Շիրակի մարզի մարզպետարանի աշխատակիցների ներկայացուցիչների, Բայանդուր բնակավայրի վարչական ղեկավար՝Դավիդ Դավդյանի և Բայանդուր գյուղի բնակիչների մասնակցությամբ:

Քննարկվեցին հետևյալ հարցերը՝

1.Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Զարգացման հնգամյա ծրագրով»Բայանդուր բնակավայրում իրականացվելիք ծրագրերի և դրանց առաջնահերթությունների մասին:

Բայանդուր բնակավայրի վարչական ղեկավար՝ Դավիդ Դավդյանը ներկայացրեց իր կողմից Ախուրյանի համայնքապետարան ուղարկված Բայանդուր բնակավայրում նախատեսվող ծրագրերը :

Ոռոգման ցանցի նորոգում

Բնակավայրի բնակիչ, « Հայաստանի ապագա » ՀԿ – ի ղեկավար՝ Արտուշ Սարոյի Գրիգորյանը պատրաստակամություն հայտնեց բարեգործական միջոցներով ոռոգման ցանցի նորոգմանը մասնակցելուն:

Վերջինիս կողմից պատվիրվել է նախահաշիվ, որը կազմում է 22.198.000 ՀՀ դրամ, որից 16.198.000 ՀՀ դրամը պատրաստ է վճարելու « Հայաստանի ապագա » ՀԿ – ի ղեկավար՝ Արտուշ Սարոյի Գրիգորյանը :

Ուստի խնդրում ենք Ախուրյան համայնքի ղեկավար պարոն՝ Արծրունի Իգիթյանին, առաջիկա ավագանու նիստին ներկայացնել բնակավայրի համար խիստ կարևոր ծրագիրը և տրամադրել մնացած՝ 6.000.000 ՀՀ դրամը:

Ծրագրի իրականություն դառնալու դեպքում բնակավայրի ոռոգվող հողատարածքները կավելանան 300 հա-ով:

Ախուրյան խոշորացված համայնքի, Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչների և Բայանդուր բնակավայրի բնակիչների կողմից հավանության արժանացվեց առաջարկված ծրագիրը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԴ ԴԱՎԴՅԱՆ